չկայ. թղէն հանեն եւ այն սուղ, օխան մէկ
ղուռուշ. զինին ալ ճէրայ մի, որ է օխա, մէկ
145 ղուռուշ:

Զի ի այլ տեղ բիլիճն զիպիլով կու հո-
տար, բայց նորա տունն ոչ. եւ հարցի թէ
Վասն է՞ր. եւ նա ասէր. Զի ասա հաւն չի հա-
նէլ ճաղ. զի յաղբն թաղեն զձուս հազարով
150 եւ յետ քսան աւուր հանեն եւ զիլայով ծախեն[7].
Վասն այն հոտի զիպիլով. բայց ես զնեմ ու
երկու-իրեք չարաթ պահեմ բռելով: Եւ ես
ասեմ. Ով խոճայ, ապա մեք այս աշխարհս
պղծեցաք. պիտի նոր օրհնել տանք զբերնիս
155 յԵրուսաղէմ: Եւ նա ծիծաղելով ասաց. Մի
կարծեր թէ եւ ես ուտեմ ինչ յայնց կերակրոց.
այլ զամենայն ինչ ի տնէն:

ԽԱՒԻԼ ԽԱՆ, ԽՆԱՑԽԱՆԻ

Եւ օր մի տարաւ զիս յոսկերչինոցն ի պէ-
զէստան, յորում բարակ քթանի՝ քէնարնին
160 ապրշում, զի ուսքուլին սպիտակ է եւ ազնիւ.
զոր ամէն աշխարհ Թուրքէ Մսրայ կ'երթայ
եւ Տրապիզոնու. բայց Մսրայն այլ լաւ է: Եւ
տեսաք ազգ եւ ազգ ալաճանի բարակ քթանէ,
զիֆտիկէ տիկտիկ եւ քիլիմնի Մսրայ եւ ապրը-
165 չիմէ ազգի ազգի խումաչք եւ այլ անթիւ թօհ-
վանի: Ապա մտաք Հալիլ խանն, ուր էին բա-

152 փռելով: — 156 յանց: — 158 պէզէստան:
— 161, 164 մսրա:

---

[7] Հմմտ. առ այս Գեր. Ստեփ. Ագոնց, Աշխարհա-
գրութիւն չորից մասանց աշխարհի. Մասն Բ. Ամբրիկէ,
Վենետիկ 1802, էջ 32: